

**Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ (ԳԱՏԱՀ)  
ԱՄՆ քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ (ՔՀՄՀ)  
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (ՀՀ ԿԳՆ)**

**Հիմնարար Հետազոտությունները Հայաստանի Համալսարաններում (ՀՀՀՀ)  
ԾՐԱԳՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**I. Ներածություն**

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ), ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ՔՀՄՀ) և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (ՀՀ ԿԳՆ) մրցութային հիմունքներով աջակցություն կցուցաբերեն Հայաստանի որևէ պետական համալսարանում Հետազոտական Կենտրոնի ստեղծման նախաձեռնությանը: Շնորհառու համալսարանի կողմից կատարվող ներդրման գումարից կախված, որը կազմելու է մինչև 60հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար, ԳԱՏԱՀ-ն ու ՔՀՄՀ-ն կտրամադրեն 150հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար, իսկ ՀՀ ԿԳՆ-ն կտրամադրի 90հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ այսպիսով անհատույց տրամադրելով 240հազ. ԱՄՆ դոլար՝ ընդհանուր առմամբ մինչև 300հազ. ԱՄՆ դոլար կազմող նախագծի բյուջեի համար: ԳԱՏԱՀ-ը, ՔՀՄՀ-ն և ՀՀ ԿԳՆ-ն կաջակցեն մինչև **300հազ.** ԱՄՆ դոլար կազմող մեկ դրամաշնորհի:

**Ա. Ծրագրի նպատակները**

ՀՀՀՀ ծրագրի հիմնական նպատակն է նպաստել հիմնարար հետազոտությունների բնագավառներում Հայաստանի պետական համալսարանների հնարավորությունների զարգացմանը՝ ստեղծելով բարձրորակ Հետազոտական Կենտրոն (ՀԿ) հիմնարար (բնական, ճշգրիտ և տեխնիկական) գիտությունների բնագավառում: Ընտրված պետական համալսարանում ստեղծվող ՀԿ-ն պետք է զարգացնի և համատեղի միջազգային չափանիշներին բավարարող հետազոտական աշխատանքներն ու կրթական գործընթացը՝ սերտ արտաքին կապեր հաստատելով այլ հետազոտական կազմակերպությունների հետ՝ ներառյալ այն կազմակերպությունները, որոնք ունեն այլ գերատեսչական պատկանելիություն:

ՀՀՀՀ ծրագիրը հետապնդում է հետևյալ նպատակները՝

- 1) Ընտրված հայկական պետական համալսարանում արդիականացնել հետազոտական տեխնիկական սարքավորումների բազան,
- 2) Կրթական գործընթացի մեջ ներմուծել նոր մեխանիզմներ՝ ներառյալ հետազոտական աշխատանքներում ուսանողների անմիջական մասնակցության հնարավորությունների ստեղծումն իրենց ուսման ընթացքում,
- 3) Զարգացնել ինչպես հետազոտական, այնպես էլ կրթական կապերը այլ հայկական և միջազգային կազմակերպությունների հետ՝ անկախ դրանց գերատեսչական պատկանելիությունից, ներառյալ Գիտությունների Ազգային Ակադեմիայի համակարգի ինստիտուտները,

4) Մրցութային մեխանիզմով ստեղծել հատուկ հնարավորություններ շնորհալի երիտասարդ հետազոտողների համար՝ իրենց սեփական հետազոտական մտահղացումներն իրականացնելու համար՝ օրինակ, կրթաթոշակի տեսքով:

#### **Բ. Ծրագրի նկարագրությունը**

- Ծրագրի ֆինանսական ներկա մակարդակով աջակցություն կցուցաբերվի Հայաստանի պետական համալսարաններից որևէ մեկում մեկ Հետազոտական Կենտրոնի ստեղծման գործընթացին:
- Նորաստեղծ ՀԿ-ն ֆինանսավորվելու է երեք տարիների ընթացքում:
- ՀԿ-ի ֆինանսավորումը նախատեսվում է մոտավորապես հետևյալ չափաբաժիններով՝ առաջին տարվա համար մինչև 220հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրորդ և երրորդ տարիների համար՝ միջինում տարեկան 40հազ. ԱՄՆ դոլար:

Յուրաքանչյուր պետական համալսարանից՝ ներառյալ համալսարանի մասնաճյուղերը, կարող է ընդունվել առավելագույնը երկու հայտ: Յուրաքանչյուր կազմակերպության գիտական խորհուրդը կարող է միայն երկու հայտ ներկայացնել, իսկ համալսարանի ղեկավարը՝ ստորագրել միայն երկու հայտ:

**ԳՄՍՄՀ-ին և ՔՀՄՀ-ին հայտերը ներկայացնելու վերջին ժամկետն է՝ 2005թ-ի մարտի 15-ը, երեքշաբթի, ժամը 18:00-ը:**

Բացատրողական նպատակներով կամ պարզության համար սույն հայտարարությունը կարող է անգլերենից թարգմանվել այլ լեզուների: Թարգմանությունների միջև տարբերությունների առկայության դեպքում պետք է հիմնվել անգլերեն տարբերակի վրա, որն էլ որոշիչը կհանդիսանա հայտարարության որևէ կետը մեկնաբանելու կամ սահմանելու ժամանակ:

#### **Գ. Հետազոտական Կենտրոնին վերաբերվող պահանջներ**

Պետական համալսարանում ստեղծվող Հետազոտական Կենտրոնը (ՀԿ-ն) պետք է հանդիսանա միջազգային մակարդակի գիտական հետազոտությունների իրականացման ստորաբաժանում: Այն պետք է զարգացնի և համատեղի համալսարանի և նրա հետ համագործակցող կազմակերպությունների հետազոտական և կրթական ծրագրերը: Հետազոտական Կենտրոնը պետք է կայուն կապեր ստեղծի համալսարանի և այլ հետազոտական կազմակերպությունների միջև՝ փոխշահավետություն ապահովելով գիտական համագործակցության զարգացման և կրթական համակարգի համար:

Չնայած այն հանգամանքին, որ ծրագիրն ընդհանուր առմամբ ունի բավականին ճկուն կառուցվածք, ակնկալվում է, որ Հետազոտական Կենտրոնը պետք է՝

- Տեղաբաշխվի Հայաստանի պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից որևէ մեկում:

- Կիրառի նոր մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտական արդյունքներն ընդգրկել ուսանողների և ասպիրանտների ուսումնական գործընթացի մեջ:
- Ապահովի երկարատև օժանդակություն տվյալ համալսարանի և նրա համագործակից կազմակերպությունների (ԳԱԱ համակարգի, արդյունաբերական ձեռնարկությունների և այլն) կարիքների համար՝ արդյունավետ համագործակցության և ՀԿ-ի ռեսուրսների համատեղ օգտագործման միջոցով:
- Իրականացնի լայնածավալ և ստեղծագործական գործունեություն հետազոտական, կրթական և արտաքին կապերի ոլորտներում:
- Ղեկավարվի Ծրագրի Տնօրենի, որը պետք է հանդիսանա հետազոտող և ակտիվորեն մասնակցի նախագծի կրթական գործունեության մեջ, ինչպես նաև հետազոտական, կրթական և արտաքին կապերի համար պատասխանատու Ծրագրի երեք և մեկ վարչական ղեկավարներից բաղկացած խմբի կողմից:
- Տրամադրի հատուկ մրցությային հնարավորություններ շնորհալի երիտասարդ հետազոտողներին՝ կրթաթոշակների տեսքով, որի համար տարեկան բյուջեից կարող է օգտագործվել առնվազն 10հազ. ԱՄՆ դոլարին համարժեք գումար:
- Ներկայացնի 20%-ի չափով համաֆինանսավորման հնարավորություն տեղական աղբյուրներից, ինչպիսիք կարող են լինել համալսարանը, որտեղ ստեղծվելու է ՀԿ-ն, տեղական կամ հանրապետական կառավարման մարմինները, առևտրային կազմակերպությունները, տեղական դոնորները կամ բարեգործական կազմակերպությունները:

#### Դ. Ժամանակացույցը

- Հայտերը պետք է ներկայացվեն ոչ ուշ, քան 2005թ-ի մարտի 15-ը, երեքշաբթի, ժամը 18:00-ը:
- Մրցույթին ներկայացված յուրաքանչյուր հայտ կենթարկվի անկախ փորձաքննության, իսկ ընտրված խմբերի աշխատավայրեր կիրականացվեն նաև այցելություններ: Ընտրված համալսարաններ այցելությունները տեղի կունենան 2005թ. օգոստոսին:
- Ենթադրվում է, որ շնորհառու ՀԿ-ն կհայտարարվի ԳԱՏԱՀ-ի, ՔՀՄՀ-ի և ՀՀ ԿԳՆ-ի կողմից մոտավորապես 2005թ. սեպտեմբերի 16-ին՝ ուրբաթ:

#### Ե. Ծրագրի աջակցությունն ու ֆինանսավորումը

- Ֆինանսական աջակցության 50%-ը (մինչև 150հազ. ԱՄՆ դոլար) տրամադրվելու է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի (ԳԱՏԱՀ) կողմից՝ ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամից (ՔՀՄՀ) ստացած դրամաշնորհի միջոցներից:
- Ֆինանսավորման 30%-ը (մինչև 90հազ. ԱՄՆ դոլար) տրամադրվելու է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից (ՀՀ ԿԳՆ)՝ պետական բյուջեից:
- Շնորհառու համալսարանը պարտավոր է իր սեփական միջացներից կամ տեղական որևէ այլ աղբյուրից հայթայթել ծրագրի համաֆինանսավորման միջոցներ՝ նախագծի ընդհանուր բյուջեի 20%-ի չափով (մինչև 60հազ. ԱՄՆ դոլար):

**Զ. Ծրագրի կառավարումը**

ՀՀՀՀ ծրագիրը համատեղ կառավարվելու է Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի (ԳԱՏԱՀ), ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակույթի հիմնադրամի (ՔՀՄՀ) և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից (ՀՀ ԿԳՆ):

**II. Հիմնարար Հետազոտությունները Հայաստանի Համալսարաններում (ՀՀՀՀ) Ծրագիրը****Ա. Համառոտ նկարագրություն**

ՀՀՀՀ ծրագրի հիմնական նպատակներն են աջակցել հայկական գիտական համակարգի զարգացմանը և գիտական համակարգը բավարար հետազոտական հմտություններով օժտված երիտասարդ կադրերով համալրման գործընթացին: Այս նպատակները իրականացնելու համար ԳԱՏԱՀ-ը և ՀՀ ԿԳՆ-ն կենտրոնացնելու են իրենց հնարավորությունները որևէ պետական համալսարանում Հետազոտական Կենտրոնի ստեղծման համար, որը կհամապատասխանի ժամանակակից հետազոտական պահանջներին: Այս ծրագրի շրջանակներում ստեղծվելու է ժամանակակից, ինքնուրույն հետազոտական ստորաբաժանում, որը կնպաստի բարձր մակարդակի հետազոտական աշխատանքների և կրթական ծրագրերի իրականացմանը, հետազոտությունների կառավարման ուսուցման և փորձի ձեռքբերմանը, աջակցություն կցուցաբերի երիտասարդ գիտաշխատողներին, կնպաստի այլ առաջատար հետազոտական, կրթական, պետական և տարածաշրջանային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությանը:

**Բ. Մասնակցության իրավունքին վերաբերող պահանջներ**

ՀՀՀՀ ծրագրի մրցույթին ներկայացվող բոլոր հայտերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

- Հայտերը պետք է ներկայացվեն Հայաստանի պետական բարձրագույն կրթական հաստատությունից: Մրցույթին կարող են դիմել հետևյալ համալսարանները.
  1. Երևանի Պետական Համալսարան (ԵՊՀ),
  2. Հայաստանի Գյուղատնտեսական Ակադեմիա (ՀԳԱ),
  3. Հայաստանի Պետական Բժշկական Համալսարան (ՀՊԲՀ),
  4. Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարան,
  5. Գյումրիի Պետական Մանկավարժական Համալսարան,
  6. Վանաձորի Պետական Մանկավարժական Համալսարան,
  7. Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարան (ՀՊՃՀ):
- Նույն համալսարանից կարող է ներկայացվել միայն երկու հայտ:
- Պետք է հաշվի առնել, որ համալսարանի մասնաճյուղերից ստացվող հայտերը դիտվելու են որպես նույն համալսարանը ներկայացնող դիմումներ: Դրանցից են՝
  - Երևանի ԵՊՀ և Իջևանի ԵՊՀ,
  - Երևանի ՀՊՃՀ և Գյումրիի, Վանաձորի, Գորիսի և Կապանի ՀՊՃՀ:
- Համալսարանի ղեկավարը չի կարող է մասնակցել ծրագրում՝ որպես Ծրագրի Տնօրեն կամ Ծրագրի Ղեկավար:

- Յուրաքանչյուր անձ կարող է Ծրագրի Տնօրեն կամ Ծրագրի Ղեկավար հանդիսանալ սույն մրցույթի համար ներկայացվող միայն մեկ նախագծում, և Ծրագրի Տնօրենը չի կարող հանդիսանալ նաև Ծրագրի Ղեկավար:
- Նախապատվություն կտրվի այն հայտերին, որոնց կազմում ընդգրկված կլինեն նախկինում ռազմական ուղղվածություն ունեցող հետազոտություններում ներգրավված գիտաշխատողներ:

#### Գ. Պարտադիր պահանջներ

ՀՀՀՀ ծրագրի շրջանակներում ծավալվող ամբողջ գործունեությունը պետք է համապատասխանի հետևյալ պարտադիր պահանջներին՝

- Եթե որևէ հետազոտության ընթացքում նախատեսվում են փորձեր մարդկային օրգանների կամ բջիջների հետ, ապա հետազոտությունը իրականացնող կազմակերպությունը պետք է ընդունի «Մարդկային օրգանների հետազոտություններ» կանոնակարգով նախատեսված պայմանները (տե՛ս Հավելված 2):
- ԳԱՏԱՀ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ճանապարհորդությունները պետք է իրականացվեն «Fly America Act»-ի պայմաններին համապատասխան: «Fly America Act»-ի կանոնների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել հետևյալ ինտերնետային էջը՝  
[http://www.crdf.org/AwardsAdministration/fly\\_america\\_act.pdf](http://www.crdf.org/AwardsAdministration/fly_america_act.pdf) :
- Ռեկոմբինանտ ԴՆԹ մոլեկուլներ ընդգրկող բոլոր հետազոտությունները պետք է ընդունեն ԱՄՆ Առողջապահության Ազգային Ինստիտուտի կողմից սահմանված պայմանները:  
Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել հետևյալ ինտերնետային էջը՝  
[http://www.crdf.org/AwardsAdministration/general\\_award\\_terms\\_conditions.html](http://www.crdf.org/AwardsAdministration/general_award_terms_conditions.html)

#### Դ. Հայտի ներկայացումը

- Յուրաքանչյուր հայտ պետք է բաղկացած լինի տիտղոսաթերթից (**Ձև-Ա**)՝ Ծրագրի Տնօրենի, Ծրագրի երեք ղեկավարների և համալսարանի ղեկավարի բնօրինակ ստորագրությամբ:
- **Հայտի երեք հայերեն և երեք անգլերեն օրինակ պետք է ներկայացվի ԳԱՏԱՀ՝ մինչև հայտերի ներկայացման վերջին ժամկետի ավարտը, որն է 2005թ-ի մարտի 15-ը, ժամը 18:00-ը :**
- Միայն ֆաքսով ուղարկված հայտերը կհամարվեն անվավեր և չեն դիտարկվի:
- Դիմորդները պետք է նաև ԳԱՏԱՀ-ին և ՔՀՄՀ-ին ներկայացնեն իրենց հայտի էլեկտրոնային տարբերակը՝ մինչև հայտերի ընդունման ժամկետի ավարտը: Էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկել ԳԱՏԱՀ-ին [brau@nfsat.am](mailto:brau@nfsat.am) , իսկ ՔՀՄՀ-ին՝ [armenia@crdf.org](mailto:armenia@crdf.org) հասցեներով:
- Բոլոր նախագծերի էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացվեն որպես **ՄԵԿ** էլեկտրոնային ֆայլ:

**Կոնտակտային տվյալներ:**

Ալեքսանդր Խաչունց

Նախագահի խորհրդական

Գիտության և Առաջատար Տեխնոլոգիաների Ազգային Հիմնադրամ (ԳԱՏԱՀ)

Հայաստան, ք. Երևան, 375014, Ազատության պող. 26

Հեռ: (374-1) 28-81-92

Ֆաքս: (374-1) 28-13-80

[brau@nfsat.am](mailto:brau@nfsat.am)

ԳԱՏԱՀ-ի և ՔՀՄՀ-ի կողմից ստացված բոլոր հայտերը պետք է լինեն լրիվ և պարունակեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Այն հայտը, որը չի պարունակի պահանջվող բոլոր ձևերը, ինչպես նկարագրված է Բաժին II.Ը-ում, կհամարվի է անվավեր: 2005թ-ի մարտի 15-ից ուշ ներկայացված հայտը նույնպես կհամարվի անվավեր: Հայտը ԳԱՏԱՀ-ին և ՔՀՄՀ-ին ներկայացնելուց և նրանց կողմից հաստատվելուց հետո փոփոխության չի կարող ենթարկվել: Եթե հանգամանքների կտրուկ փոփոխության բերումով հայտը ներկայացնելուց հետո պարզվի, որ նախագիծը այլևս չի կարող իրականացվել այնպես, ինչպես նախատեսված էր, Ծրագրի Տնօրենը պետք է դրա մասին տեղեկացնի ԳԱՏԱՀ-ին՝ հայտնելով, որ հայտը այլևս չի մասնակցելու մրցույթին:

**Ե. Հայտերի փորձաքննությունը**

- Բոլոր հայտերը ստանալուց հետո մանրամասն ստուգվելու են՝ դրանց լրիվությունն ու մրցույթի պայմաններին համապատասխանությունը պարզելու համար:
- ԳԱՏԱՀ-ը կդիմի անկախ փորձագետների, ներառյալ ԱՄՆ-ից՝ ՔՀՄՀ-ի օգնությամբ, որպեսզի նրանք գնահատեն հայտերը՝ առաջնորդվելով Բաժին II.Զ-ում ներկայացված գնահատման չափանիշներով:
- Անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա կատարվելու են այցելություններ ընտրված մի շարք դիմորդների աշխատավայրեր: Այցելությունները կատարվելու են հայ-ամերիկյան խմբի կողմից, որը կընդգրկի ԳԱՏԱՀ-ի, ՔՀՄՀ-ի և ՀՀ ԿԳՆ-ի ներկայացուցիչներին: Փորձաքննության և այցելությունների արդյունքների հիման վրա ընտրվելու է թվով մեկ դրամաշնորհ:

**Զ. Գնահատման չափանիշներ**

Անկախ փորձագետները հայտերը գնահատելու են հետևյալ չափանիշներով.

1. **Գիտական արժանիքները:** Հավանականությունը, որ տվյալ նախագծի իրականացումը կհանգեցնի նոր գիտելիքների կամ նորարարական զարգացումների ու գործընթացների, որոնք էական ազդեցություն կարող են ունենալ գիտության մեկ կամ մի քանի բնագավառների վրա:
2. **Հետազոտական և կրթական գործընթացների ինտեգրում:** Հավանականությունը, որ ստեղծվող կենտրոնը կստեղծի բավարար պայմաններ հետազոտական ծրագրի մեջ ուսանողների և երիտասարդ գիտաշխատողների (որոնք իրենց թեկնածուական թեզը

պաշտպանել են վերջին վեց տարիներ ընթացքում, կամ այն գիտաշխատողները, որոնք բուհը ավարտել են ինը տարուց ոչ շուտ) ակտիվ մասնակցության համար:

3. **Վարչա-կազմակերպչական նորամուծություն:** Նոր տիպի վարչա-կազմակերպչական կառույցի օգտագործում՝ ներառյալ ինստիտուտների միջև ծախսերի կիսումը և այլ կազմակերպությունների հետ կապերի հաստատումը և այլն:
4. **Տեխնիկական փորձաքննություն:** Գիտաշխատողների փորձը, տեխնիկական տեսակետից խնդրի լուծման առաջարկվող մոտեցման արդյունավետությունը, Կենտրոնի տեխնիկական ռեսուրսների (առկա և հայցվող) համապատասխանությունն ու բավարարությունը:
5. **Կառավարում:** Ծրագրի պատրաստվածությունը նախագծի կառավարելիության և համակարգման տեսակետից:
6. **Երիտասարդ գիտաշխատողներ:** Երիտասարդ հետազոտողների համար բարենպաստ հետազոտական մթնոլորտի ստեղծումը:
7. **Ինքնուրույն գոյատևելու հնարավորություն:** Դրամաշնորհի ավարտից հետո ստացված սարքավորումների աշխատունակության պահպանման և հետազոտական աշխատանքների շարունակման պլանը:

#### Է. Գաղտնիություն

ԳԱՏԱՀ-ը և ՔՀՄՀ-ն ստացվող բոլոր հայտերը դիտարկում են որպես գաղտնի տեղեկություններ և պահանջելու են, որպեսզի բոլոր փորձագետները և ԳԱՏԱՀ-ի Գիտխորհրդի անդամները հարգեն հայտերի գաղտնիությունը: Ինչևէ, հայտերի հեղինակներին զգուշացնում ենք, որ հաջողակ հայտերը կարող են ենթարկվել հրապարակման: Ուստի, հեղինակի հայտնաբերումը, հայտում պարունակվող հատուկ «բիզնես-գաղտնի» և հրապարակման համար չնախատեսվող տեղեկությունները, պետք է հատուկ պիտակավորվեն որպես այդպիսիք՝ հայտի համապատասխան էջի վերևի կամ ներքևի մասում:

Եթե նույնիսկ հայտը դրամաշնորհի արժանանա, այդպիսի պարբերությունները ենթակա չեն լինելու հրապարակման: Իսկ այն հայտերը, որոնք դրամաշնորհի չեն արժանանա, ընդհանրապես հրապարակման ենթակա չեն:

#### Ը. Հայտի բովանդակությունը

Յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի ստորև բերված բոլոր բաղադրիչները: Հայտերը պետք է տպվեն ստանդարտ 1 տողամեջ հեռավորությամբ, կողքերից, վերևից և ներքևից 2.5 սմ լուսանցքով: Բոլոր էջերը՝ ձևերը ներառյալ, պետք է համարակալված լինեն վերևի աջ անկյունում: Հայտը պետք է ներկայացնի երեք տարի տևողությամբ նախագծի պլան: **Ամբողջ հայտը չպետք է գերազանցի 35 էջ (ներառյալ տիտղոսաթերթը, Բյուջեի ձևը և համաֆինանսավորման փաստաթղթերը), և պետք է ներկայացվեն մինչև 2005թ-ի մարտի 15-ը:**

1. **Տիտղոսաթերթ:** ( Ձև A ) պետք է ստորագրված լինի համալսարանի ղեկավարի, Ծրագրի Տնօրենի և Ծրագրի երեք Ղեկավարների կողմից:

2. **Ամփոփագիր:** Մեկ համառոտ պարբերությամբ ամփոփել նախագծի բոլոր կարևոր կողմերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով խնդիրներին, մեթոդներին և հնարավոր արդյունքներին:
3. **Նախագծի նկարագրություն** (մինչև 6 էջ): Նկարագրել և բացատրել նախագծի նպատակները գիտության և կրթության բնագավառում: Բացատրել, թե ինչպես են դրանք նպաստելու Բաժին I.Ա-ում նշված ՀՀՀՀ ծրագրի նպատակների իրականացմանը: Նկարագրել ՀԿ-ի հետազոտական և կրթական գործունեության, ներքին և արտաքին կապեր հաստատելու պլանները, ինչպես նաև ակնկալվող արդյունքները: Պետք է նշել ֆինանսական աջակցության այլ աղբյուրները: Նկարագրությունը պետք է հստակ մատնանշի առաջարկվող ՀԿ-ի նորարական հատկանիշները:
4. **Նախագծի առաջատար մասնակիցների ցանկը՝ բացի Ձև-Ա մեջ նշված մասնակիցներից (մինչև 2 էջ):** ՀԿ-ի գործունեության ընթացքում նախատեսված յուրահատուկ աշխատանքների պատասխանատու առաջատար մասնակիցները կամ առաջատար մասնագետները:
5. **Հետազոտական պլան** (մինչև 3 էջ): Շարադրել երեք տարի տևողությամբ հետազոտությունների պլան, որը կարտացոլի ՀԿ-ի գիտական ծրագիրը: Շարադրանքը պետք է նկարագրի այն գիտական խնդիրները, որոնք ուսումնասիրվելու են, և ինչպես են կենտրոնի հետազոտական նախագծերը նպաստելու դրանց լուծմանը: Հետազոտական պլանում պետք է մատնանշված լինի թե ինչով է ՀԿ-ի գոյությամբ պայմանավորված ռազմավորությունը շահավետ կամ անհրաժեշտ, և ինչպես են հետազոտական աշխատանքները ինտեգրվելու կրթության հետ: Պլանը պետք է նկարագրի ուսանողներին հետազոտական նախագծերի մեջ ընդգրկելու արդյունավետ ուղիները:
6. **Հղումների ցանկը:** Պետք է ներկայացնել հղումների ցանկ՝ նույն հերթական համարակալմամբ, ինչպես նշված է նախագծի տեքստում:
7. **Կառավարման պլան** (մինչև 3 էջ): Նկարագրել առաջարկվող ՀԿ-ի կառավարման կառուցվածքը՝ ներառելով աշխատակազմը և նրանց պարտականությունները: Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել նաև կառավարման մարմնի սխեման: Բացատրել, թե ինչպես են ՀԿ-ի կառավարման կառուցվածքի շրջանակներում փոխազդելու (ինտեգրվելու) դրված գիտական և կրթական խնդիրները, և ինչպես են բաշխվելու և կիսվելու միջոցներն ու սարքավորումները:
8. **Կրթական պլան** (մինչև 3 էջ): Շարադրել Կենտրոնի կրթական հատկանիշները: Նկարագրել այն պլանը, որով լավագույն դասախոսներին և ուսանողներին (և՛ բակալավրիատուրայի, և՛ մագիստրատուրայի) ակնկալվում է ներգրավել նախատեսված կրթական գործընթացի մեջ, ինչպես նաև նկարագրել, թե ինչպես է կենտրոնը համագործակցելու համալսարանի հետ:
9. **Կապեր հաստատելու պլան** (մինչև 2 էջ): Նկարագրել, թե ինչպես է ակնկալվում հաստատել կամ ընդլայնել կապերը ՀԿ-ն հիմնող կազմակերպությունից դուրս այլ կազմակերպությունների հետ՝ ներառյալ (եթե հնարավոր են այդպիսիք) Հայաստանի այլ կազմակերպությունները, օրինակ՝ Գիտությունների Ակադեմիայի ինստիտուտները, արդյունաբերական, տեղական, տարածաշրջանային կամ պետական

մարմինները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները: Բոլոր հայտերը պետք է ունենան ինչ որ տեսակի միջազգային կապեր հաստատելու պլան:

10. **Ինտեգրում (մինչև 1 էջ):** Բացատրել, թե ինչպես են միմյանց հետ կապված ծրագրի երեք բաղադրիչները (հետազոտություններ, կրթություն և արտաքին կապեր) և ինչպես են դրանք փոխկապակցված՝ ինչպես գործառնական, այնպես էլ հայացակարգային տեսակետից:
11. **Աջակցություն երիտասարդ գիտաշխատողներին** (մինչև 2 էջ): Հստակ նշել այն պլանը, որով կազմակերպվելու է նպատակային մրցույթ երիտասարդ գիտաշխատողներին հատուկ աջակցություն ցուցաբերելու համար (ինչպես նշված է Բաժին II.2-ում): Այս մրցույթի ընդհանուր բյուջեն պետք է կազմի առնվազն 10հազ. ԱՄՆ դոլար: Երիտասարդ գիտաշխատողները անպայման չէ, որ ներկայացնեն ՀԿ-ն հիմնող կազմակերպությունը:
12. **Նախագծի ընթացքում ակնկալվող միջանկյալ արդյունքները և ինքնուրույն գոյատևելու պլանը** (մինչև 2 էջ): Նշել իրական որակական և քանակական նվաճումները, որոնք կենտրոնը ակնկալում է ստանալ ՀՀՀՀ դրամաշնորհի շրջանակներում աջակցության երեք տարիների ընթացքում: Նշել, թե նախագծի որ արդյունքները կարելի օգտագործել որպես հաջողությունների գնահատման չափանիշ: Բացատրել, թե ինչպես են այդ նվաճումները ազդելու ՀԿ-ի հետագա հետազոտական պլանների վրա: Շարադրել դրամաշնորհի ավարտից հետո ՀԿ-ն պահպանելու վերաբերյալ առկա պլանները և նշել, թե ինչպես է ՀԿ-ն պատրաստվում լրացուցիչ համագործակիցներ և ֆինանսավորման աղբյուրներ գտնել:
13. **Սարքավորումներին վերաբերող պլան** (մինչև 2 էջ): Ներկայացնել Կենտրոնի համար սարքավորումների ձեռքբերման պլան: Պետք է նկարագրել, թե ինչպես է օգտագործվելու յուրաքանչյուր թանկարժեք սարքավորումը (20հազ. ԱՄՆ դոլար կամ ավելի արժողությամբ սարքավորում) և թվարկել հնարավոր օգտգործողներին՝ տվյալ ինստիտուտից և Հայաստանի որևէ այլ կազմակերպությունից: Թանկարժեք սարքավորումների համար պետք է ներկայացնել հանրապետության մակարդակով կոլեկտիվ օգտագործման պլան, և պետք է հստակ երևա, որ հայցվող սարքավորումը տվյալ պահին չկա Հայաստանում:
14. **Ծախսերի նկարագրություն** (մինչև 2 էջ): Ձև-B և ծախսերի հիմնավորում: Ներկայացրեք երեք տարվա ծախսերի բյուջե (ԱՄՆ դոլարով), որը պետք է ներառնի ծախսերի հետևյալ տեսակները՝ անհատական ֆինանսական աջակցություն, սարքավորումներ, կրթաթոշակներ, ճանապարհորդություններ, բաժանորդագրություններ և կազմակերպությանը ցուցաբերվող աջակցություն: Նախագծի առաջին տարվա համար առաջարկվում է նախատեսել 220հազ. ԱՄՆ դոլարի բյուջե, և ոչ ավելի, քան 40հազ.-ական ԱՄՆ դոլար՝ 2-րդ և 3-րդ տարիների համար: Բյուջեի հետ կապված հատուկ ցուցումների համար խնդրում ենք ուսումնասիրել Բաժին II.Թ-կետը:
15. **Կետ 1 և 4-ում նշված նախագծի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ:** Լրիվ կենսագրական տվյալներ (CV) անհրաժեշտ է ներկայացնել միայն Ծրագրի Տնօրենի և Ծրագրի երեք Ղեկավարների համար, իսկ յուրաքանչյուր

լրացուցիչ մասնակցի համար՝ ոչ ավելի, քան 1/3 էջ: Յուրաքանչյուր կենսագրական տվյալների(CV) մեջ պետք է նշվի անձի անունը, պաշտոնը, կրթությունը, որտեղ է աշխատում կամ աշխատել՝ տարեթվերով, մասնագիտության բնագավառը և առնվազն 3 հրապարակումների ցանկ:

- 16. Համաֆինանսավորման փաստաթղթեր:** Համալսարանները պետք է ներկայացնեն՝
- ա) Համաֆինանսավորող կազմակերպության կողմից ֆինանսական աջակցության պատրաստակամությունը երաշխավորող նամակ (Կենտրոնը ստեղծող կազմակերպությունից, նախարարություններից, տարածաշրջանային կամ տեղական կառավարություն, առևտրային կազմակերպություններ և այլն)՝ ըստ Հավելված 3-ի: Նամակը պետք է արտահայտի նախագծին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու պատրաստակամությունը՝ նախագծի ընդհանուր բյուջեի 20%-ի չափով (60հազ. ԱՄՆ դոլարի չափով, եթե նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 300հազ.ԱՄՆ դոլար): Ֆինանսական աջակցության պատրաստակամությունը երաշխավորող նամակը պետք է հաստատված և ստորագրված լինի համաֆինանսավորում տրամադրող կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի կողմից:

#### **Թ. Բյուջեին վերաբերող ցուցումներ**

Սույն ծրագրի համար ներկայացվող բյուջեն կարող է ներառել հետևյալ ծախսերը՝

##### **1) Անհատական ֆինանսական Աջակցություն (ԱՖԱ)**

Անհատական ֆինանսական աջակցությունը հանդիսանում է նախագծում ընդգրկված յուրաքանչյուր անհատի կատարված աշխատանքի դիմաց վճարվող գումարը (այսինքն աշխատանքի հատուցում): Անհատական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է յուրաքանչյուր մասնակցի մասնագիտական մակարդակի և կատարվող աշխատանքի ծավալի հիման վրա:

Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային մեկ ամիսը համարվում է 22 օր՝ 8 ժամյա աշխատանքային օրով: Ծրագրի աշխատանքային խմբին տրամադրվող անհատական ֆինանսական աջակցության ընդհանուր չափը չպետք է գերազանցի **միջինում 250 ԱՄՆ դոլար\*** մարդ գումարը: Ծրագրի Տնօրենի կամ Հետազոտության, Կրթության և Արտաքին կապերի պատասխանատու Ղեկավարների համար Անհատական ֆինանսական աջակցության հայցերը մեկ անձի համար չպետք է գերազանցեն ամսեկան 300 ԱՄՆ դոլարը:

Սովորաբար անհատական ֆինանսական աջակցության օրեկան հաշվարկը կախված է մասնագիտական մակարդակից՝ ինչպես ցույց է տրված ստորև: Խնդրում ենք հաշվի առնել այս աղյուսակը, ինչպես նաև ի նկատի ունենալ աշխարհագրական, կենսամակարդակային և այլ գործոնները նախագծի աշխատակազմի համար անհատական ֆինանսական աջակցությունը հաշվարկելիս:

<u>Ուաշտոնը</u>	<u>Օրեկան տրամադրվող անհատական ֆինանսական աջակցությունը</u>	<u>Առավելագույն գումարը, որը չի կարելի գերազանցել</u>
Ծրագրի Տնօրեն	\$11.37-ից \$13.64	\$13.64
Հետազոտությունների, կրթության և կապերի հարցերով զբաղվող ղեկավար	\$11.37-ից \$13.64	\$13.64
Գիտաշխատող/ճարտարագետ	\$6.82-ից \$11.37	\$11.37
Տեխնիկական/Գիտական Աջակցության աշխատակից	\$4.55-ից \$6.82	\$6.82
Ուսանող	\$3.18-ից \$6.82	\$6.82
Վարչական/Գրասենյակային աշխատակից	\$2.28-ից \$4.55	\$4.55

## **2) Երիտասարդ գիտաշխատողներին ցուցաբերվող աջակցություն**

Երիտասարդ գիտաշխատողներին աջակցության ցուցաբերումը հանդիսանում է դրամաշնորհի հիմնական պայմաններից մեկը, և յուրաքանչյուր տարի դրան պետք է հատկացվի առնվազն 10հազ. ԱՄՆ դոլար: Այս աջակցությունը կարող է լինել հետևյալ տեսքով (կամ այս բոլոր ձևերով)`

- ա) **Կրթաթոշակներ:** Բակալավրիատի կամ մագիստրատուրայի ուսանողները, որոնք մասնակցում են այս նախագծում, կարող են ստանալ լրացուցիչ կրթաթոշակներ: Անհատական լրացուցիչ կրթաթոշակները պետք է հաշվարկվեն վերը բերված աղյուսակում թվարկված աշխատանքի ծավալի և օրեկան մասնակցության մակարդակի հիման վրա:
- բ) **Գործուղման կրթաթոշակներ:** Յուրաքանչյուր տարի, մրցութային հիմունքներով, ուսանողներին կարող են շնորհվել միջոցներ` գործուղվելու արտասահման և այն-տեղ կատարելու նախագծի հետ առնչվող հետազոտություններ, կամ մասնակցել միջազգային որևէ գիտաժողովի կամ սեմինարի:
- գ) **Լրացուցիչ դասընթացներ:** Նախագծում մասնակցող ուսանողներին պետք է տրվի անգլերեն լեզվի դասընթացներ հաճախելու հնարավորություն: Ուսանողների համար լրացուցիչ դասընթացներից են` ա) տեխնոլոգիաների առևտրայնացման վերաբերյալ դասընթացները, բ) մենեջմենթի դասընթացները, գ) նոր սարքավորումը օգտագործելու դասընթացները, և դ) դասընթացներ հատուկ թեմաներով հատուկ բնագավառներում, որոնք ընդգրկված չեն համալսարանների սովորական ծրագրի մեջ:

## **3) Լրացուցիչ դասընթացներ**

Խմբի բոլոր մասնակիցները կարող են դասընթացներ այցելել այնպիսի բնագավառներում, ինչպես, օրինակ, մենեջմենթի ոլորտում կամ նոր սարքավորումը օգտագործելու դասընթացներ: Դասընթացները անցկացնող անձանց առավելագույն անհատական ֆինանսական աջակցությունը չպետք է գերազանցի ամսեկան 100 ԱՄՆ դոլար գումարը:

## **4) Հետազոտական սարքավորումներ և նյութեր**

Այս կետի տակ մտնում են նաև համակարգիչները, բայց ոչ գրասենյակային սարքավորումները: Հետազոտական սարքավորման և նյութերի համար առաջարկվող նվազագույն գումարն է 170հազ. ԱՄՆ դոլարը: Ցանկացած 1000 ԱՄՆ դոլար կամ ավել արժողություն ունեցող առանձին ձեռքբերման համար պետք է ներկայացնել հատուկ հիմնավորում Բյուջեի նկարագրական մասում:

#### **5) Գրասենյակային պիտույքներ**

Այս կետի տակ կարող են մտնել ՀԿ-ի լաբորատորիաների վերանորոգումները, կահավորումը, պատճենահանող սարքը, թուղթ, քարթրիջներ և այլն: Այս դասի համար նախատեսվող առավելագույն գումարը երեք տարվա ժամանակահատվածով կարող է կազմել 10հազ.ԱՄՆ դոլար: Ցանկացած 1000 ԱՄՆ դոլար կամ ավել արժողություն ունեցող առանձին ձեռքբերման համար պետք է ներկայացնել հատուկ հիմնավորում Բյուջեի նկարագրական մասում:

#### **6) Գործուղումներ**

- a) **Միջազգային գործուղումներ:** Գործուղումներ միջազգային գիտաժողովներին կամ սեմինարներին մասնակցելու, արտասահմանյան գործընկերների հետ հանդիպելու՝ համագործակցության հնարավորությունները քննարկելու նպատակով: Նախագծի շրջանակներում աշխատակազմի գիտական գործուղման տրանսպորտի և օրապահիկի համար նախատեսվող աջակցությունը պետք է նկարագրված լինի Բյուջեի հիմնավորման մասում (Budget Narrative): Բոլոր մասնակիցները պետք է ճամփորդեն ամենամատչելի գներով: ԳԱՏԱՀ-ի միջոցներով կատարվող ճանապարհորդությունները պետք է համապատասխանեն «Fly America Act»-ի բոլոր պայմաններին (Fly America Act-ի հատուկ ցուցումների համար առաջարկվում է այցելել [http://www.crdf.org/AwardsAdministration/fly\\_america\\_act.pdf](http://www.crdf.org/AwardsAdministration/fly_america_act.pdf)):

Միջազգային ճանապարհորդությունների համար պարտադիր է ունենալ առողջական ապահովագրություն: Երկու շաբաթ կամ ավելի քիչ տևողությամբ այցերի համար օրապահիկը պետք է հաշվարկվի ԱՄՆ կառավարության կողմից սահմանված ցուցումների հիման վրա: Դիմորդները պետք է այցելեն ԱՄՆ կառավարության կողմից սահմանված օրապահիկը պարունակող ինտերնետայի էջերը, օրինակ՝ <http://policyworks.gov/org/main/mt/homepage/mtt/perdiem/perd05d.html> կամ

